Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5308

2(059)
O-83
1876



210591
Հ-36

ՅԵՒԵԼՈՒԱԾՔ

1876-Թ.

ՕՐԱՑՈՒՑԻ

ԾԱՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՑ

Ա-ՐԱՀԱՆ Տ-ՐԷ

ԽՄԲԱԳԻՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Էդգար Սահակեանոսեան

ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ.

ՀԵՐԵՒԱՆ.

Ի Տպ. Զաքարիայ Գ. Յակոբեանց:

1875.

Дозволено Цензурою Тифлисъ. 18 Сентября 1875 года.

ՏԱՐԻՆ.

Երդ սրացաւ 'ի ծով խոր ժամանակի,
Յարակայ Ովկիան. Հոգ յանդարձ ուղի.
Ընդ որ հոլովին կեանք մահկանացուաց՝
Յողբս և 'ի վիշտս թշուառ ծերութեանց։
Երդ, ցնծա՞մք
Թէ լամք։

Մասն մանականի այս մեր սուղ կենաց,
Ի կորուստ սլանայ ընդ խինդ և ընդ լաց.
Եւ ընդ վայր սահին փառք մեր անոտի,
Ուստի, ապաշաւ խաղայ 'ի սրտի։
Երդ, ցնծա՞մք
Թէ լամք։

Զիւր գործոց լուսն օ՛ն անդր կնքեաց,
Թէ ունայն և թէ՝, յարգասիս բարեաց,
Միայն 'ի նախանձ 'ի սէր Յիսուսեան
Երդէն շատանալ և կեալ յաւիտեան։
Յայնժամ ցնծամք
և ո՛չ լամք։

Օ՛ն յառաջ Եղբարք յառաջ անվառով,
Յաւերժել 'ի նորն մեծագոյն յուսով,
Զողջոյն 'ի բերան դայ 'ի հրաւէր,
Մարդկային սեռին. բայց աւաղ տարբեր։
Երդ, ցնծա՞մք
Թէ լամք։

Ոչ յերկու ձեռին պատարուն բաժակ,
Ի միում բերկրանք, միւսում դառնորակ.
Զնեէ անտեղեակ հանդիպց յարակայ՝
Ոմանց յանդոյդ կեանս և ոմանց 'ի մահ:
Երդ, ցնծմամբ
թէ լամբ:

Երդ զՀել զկեանս 'ի ջան 'ի վաստակ,
Տքնել 'ի յիմաստս զիտութեան անյագ.
Յոր զանմահութեան զվառաց պսակ,
Ի ձակատս մերոյս դրոշմել անքակ:
Էհա՛ ցնծութիւն,
Անմահ խնդութիւն:

Մերս Հայաստանից կաթնամեռ մանկանց՝
Սուրբ մաքուր կաթինս ջամբել աննախանձ.
Ոբք 'ի յուժ եկեալ 'ի խնդել թեւաբաց,
Հրաւէր կարդայցին մեր հարց և եղբարց:
Էհա՛ ցնծութիւն,
Անմահ խնդութիւն:

Զնախանձուն 'ի սրտից զմրուրն սրբել,
Ի զուգութեան սէր զսկիս մեր յօրել,
Յուխտ մեր լինի մնալ յանքակ „Սէր",
Որով շարժեսցուք 'ի յաւիտաբեր:
Էհա՛ ցնծութիւն,
Անմահ խնդութիւն.

Ղ. ահան Ռ.հնց. Տէր—Յովհաննէսեանց:

1.

Տօն Ծննդեան և Մկրտութեան Քրիստոսի

Մենք Հայք՝ Յունուարի 6 ին կատարումենք, Յիսուսի Ծնունդը և Մկրտութիւնը իմիասին. իսկ միւս քրիստոնեայքը կատարումեն՝ Մկրտութիւնը Յունուարի 6 ին, իսկ Ծնունդը Դեկտեմբերի 25 ին: Մեր, մի օրում կատարելու պատճառը շատ պարզէ և հաւանական. որ Քրիստոս ի՛նչ օր, որ ծնուեց՝ 30 տարի անցնելով եկաւ նոյն օրը և մկրտուեց. և այս հիման վերայ քրիստոնէութեան օրից մինչև 400 թիւը, կամ սկիզբները՝ միւս քրիստոնեայքը ևս մեզ հետ իմիասին մի օրում էին տօնում. բայց յետոյ սկսեցին այս ամենասրբազան երկու տօները միմեանցից բաժանել հետևեալ առիթներով: — Ա. Որ Քրիստոս Ծնուելէ Բեթղեհէմի մէջ, իսկ մկրտուելէ Յորդանան գետումը. որոնք միմեանցից բաւականին հեռաւորութիւն ունենալով՝ շատ էին դժուարանում, այս երկու ամենասրբազան հանդիսաւոր տօները մի օրում կատարել. մանաւանդ՝ որ ձմեռ է միջոցը: Բ. կռապաշտութիւնից տեսելով մնացել էր ծէս, որ Յունուարի 1 ին կատարումէին շքեղութեամբ Նոնոնքիս կուռքի տօնը. ուստի կամենալով ոչնչացնել այդ ծէսը՝ միախորհուրդ եղած, սահմանեցին այսպէս.—Դեկտեմբերի 25 ին կատարել Ծնունդը՝ որ ութն օրից յետոյ գալիք Յունուարի 1 ը. լինի Թլպատութեան տօնը:

2.

Ոսկեանք և Սուքիասեանք

ՈՍԿԵԱՆՔ՝ հինգ հոգի ականաւոր անձինք էին, որոնց գլխաւորի անունն էր Յունարէն, Խ-ռ-ս. այնէ՝ Խ-ռիստոս. — որ նշանակումէ Հայերէն՝ Ոսկի. արժանացան մեր նախկին Լուսաւորիչ Սրբոյն Թադէոսի առաքելոյ քարոզութիւններին, որոնք մկրտուեցան և սկսեցին քարոզել։ Բայց երբ Սանսարուկ Թագաւորը նահատակեց ս. Թադէոսին՝ սուրբք Ոսկեանքը, գնացին Ծաղկոտ գաւառը Եփրատայ ակների մօտ, շինեցին խցեր և մնացին այնտեղ մօտ 43 տարի։ Իսկ 92 Թուին, Աստուծոյ հրամանովը վեր եկան սարիցը և գնացին Երուաշատ քաղաքը. Երուաշէս Հայոց Թագաւորին, Սաթենիկ Թագուհւոյն և բոլոր պալատականներին քրիստոնէութիւնը քարոզելու։ Անտեղ Թագուհու ազգականներից մի քանիսը ևս, հաւատացին և գնացին ս. Ոսկեանց հետ Եփրատայ ակները և մկրտուեցին, ընդ ամենն էին 17 հոգիք, որոնց գլխաւորներ Սո-ֆոս, ուստի և կոչուեցան Սուքիասեանք։ Սրանք մնացին ս. Ոսկեանց հետ 15 տարի ճգնաւորական վարքով։ Իսկ մօտ 107 Թուին, Հայոց Երուաւադ Թագաւորը պատահեց նորանց սարումը, և համոզելով ստիպեց որ թողնեն քրիստոնէութիւնը. բայց երբ հնար չեղաւ՝ իսկոյն չարաչար մահուամբ նահատակել տուեց ս. Ոսկեանց. որովհետև իմացաւ, որ Սուքիասեանց քրիստոնէութեան պատճառը՝ եղելն ս. Ոսկեանք։ Իսկ Սուքիասեանք ժողովելով թաղեցին երանելի սրբոց մարմինը։ Իսկ յետոյ գնացին Բաղրևանդ գաւառի մէջ Սուկաւ սարումը կրօնաւորեցան, ուր 20 տարուց աւելի մնացին։

Այս միջոցումն, Աղանաց Թագաւորի որդի Դիդիանոսը՝ ուղարկեց մի զօրագլուխ որ յետ դարձնեն նրանց իրանց երկիրը. իսկ եթէ չգնան՝ սպանեն։ Գնաց զօրապետը, և տեսաւ որ պինդ են քրիստոնէութեան մէջ, սկսեց սաստիկ չարչարելով և տանջելով նահատակել. որ եղև մօտ 130 Թուին։ Նահատակած տեղումը բղխեց աղբիւր, որ լինում էր բժշկութիւն ամէն տեսակ հիւանդութիւնների։

3.

Սրբոց Վարդանանց և Ղևոնդեանց Նահատակութիւնը

Մեր ողորմելի Հայոց ազգը, դարձեալ մնաւ այն սարսափելի նեղութեանց տակ՝ որպէս շատ անգամ ենթարկուած են եղել. բայց այս անգամ, աւելի ևս, քանզի երբ վերջացաւ Երշակունեաց Թագաւորութիւնը, սկսեց այնուհետև, Պարսից-Յազկերտ Թագաւորի տիրապետութիւնը. որ իւր չարահոգի Միհրներսէհ հազարապետի հետ խորհուրդ անելով՝ սկիզբն հրաւիրեց իրեն մօտ Հայոց Նախարարներին և իշխաններին, յարգեց և պատուասիրեց նրանց տալով, Սիւնեաց Վասակ իշխանին՝ Մարզպանութիւն, իսկ Վարդան Մամիկոնեանին՝ Սպարապետութիւն. բայց երկու տարուց յետոյ, սկսեց Հայերին յորդորել որ Կրակապաշտութիւնը ընդունեն. իսկ երբ ընդդիմացան՝ լցուեց անօրէնութեամբ և չարաչար սպանել տուեց, անձնանուէր ընտրեալներին, — Ատոմ Գնունոյն և Մանաճիհր Ուշտունոյն հանդերձ իրանց միաբանեալ զօրքովը. և այսպէս օրէցօր խստացրեց իւր անօրէն հրամանը։ Այն ժամանակը Սուրբ Յովսէփ Կաթու-

ղեկոսը, կազմեց մի Ազգային ժողով և միասիրտ հաճու-
թեամբ զրեցով հելքեցին Կրակապաշտութիւնը Պարսիկ-
ների։ Յաղկերտը ստացաւ նամակը և կարդալուն պէս՝
սաստիկ բարկութեամբ լցուած հրովարտակ ուղարկեց որ
անշուշտ Հայոց նախարարներն դան իրան մօտ։ Ուստի
Վասակ մարզպանը. Վարդան Սպարապետը, և մի քանի
նախարարներ գնացին. և երբ տեսաւ Յաղկերտը՝ բարկա-
ցաւ և խստութեամբ փակեց բանտի մէջ մինչև որ երկր-
պագեն արեգականը. այս միջոցումը պալատականներից
մինը. Խուժիկ անունով որ ծածուկ Քրիստոնեայ էր,
խորհուրդ տուեց Հայոց նախարարներին որ երեսանց կա-
տարեն Թագաւորի կամքը որ աղատուին. իսկ երբ գնան
Հայաստան՝ աղատեն հայրենիքը վտանգից։ Լսեցին այս
բոլորը, և ծանր խորհրդացութիւնից յետոյ՝ տեսան նա-
խարարները, որ եկեղեցին աւելի վտանգի մէջ կնդնի երբ
իրանք բանտարկուած մնան. ուստի՝ ակամայ երկրպագե-
ցին արեգականը Թագաւորի առաջ. ուրախացաւ Յաղ-
կերտը՝ և պատուելով դարձրեց Հայաստան բաւական-
նաչափ քրմերով։ Երբ հասան Օշական գաւառը՝ քրմա-
պետը սկսեց կործանել զիւղի եկեղեցին. այն ժամանակը
սուրբ Ղևոնդ Երէցը՝ հանդերձ ընկերներով առաջ եկաւ
և սաստիկ բարկութեամբ հեռացրեց մոգպետներին, և այս-
պէս մոգերի դալատան համբաւը տարածուեց բաղդակո-
ղոյս Հայաստան աշխարհը, իսկոյն ժողովուեցին մեծ բաղ-
մութեամբ եռանդոտ Հայերը, որոնց հետ վրայ հասաւ
և Ս. Յովսէփ Կաթուղիկոսը և եպիսկոպոսները, որոնք
արիութեամբք պատրաստուեցին ամբիծ սուրբ հաւատոյ
և Աստի սիրոյ համար պատերազմել մինչև վերջին շունչը
և մահը քաջութեամբ ընդունել. ահա այն բազմու-
թեան եպիսկոպոսաց հանդիպին՝ յառաջ եկաւ Վարդան

Սպարապետը, չոքեց և ընկաւ արտասուքով Ս. հարց
ոտքերը, խնդրելով և աղաչելով իւր մեղքին թողութիւն
երեսանց ուրացութեան համար և յայտնեց միանգամայն
թէ՛ իւր և թէ՛ նախարարաց՝ ներքին սուրբ կամքը, որոնց
նպատակներ փրկել Հայաստան աշխարհը։ Իսկ Վասակ
Մարզպանը, որ սրանց ուրացելէր Քրիստոսին՝ նե՛նգ և
խաբեբայական խորհրդով հաղարտացրեց եպիսկոպոսաց և
ժողովրդոց ասելով՝ «առ այժմ լռե՛նք, իսկ յետոյ խոհե-
մութեամբ յետ կուղարկենք քրմերին. . . . . Եւ երբ
ժողովուրդը փոքր ինչ խաղաղուեց մոգերը առաջ դալով
սիրտ առան և սկսեցին ծաւալել կրակապաշտութիւնը . . :
Ահա այս դաղտնի խաբեբայութեանց չկարողացաւ դիմա-
նալ Սպարապետ քաջ Վարդանը, այլ՝ իսկոյն ղայրացած
և բարկացած արտով վերառաւ իրան ընտանիքը և բարե-
կամքը ու գնաց հեռացաւ Հայոց աշխարհից. նախարար-
ներն լսելուն պէս՝ շուտով մարդիկ ուղարկեցին նորա ետևից
որ անչափ աղաչանքով հաղիւ յետ դարձրին, խոստա-
նալով միաբան մնալ, հաստատուն պահել քրիստոնէու-
թիւնը և ընդդէմ լինել անհաւատներին։ Որանից յետոյ
ժողով կազմեցին Շահապիվանումը, ուր հաւաքուեցին
բոլոր եպիսկոպոսները և կաթուղիկոսի հետ ուխտ դնելով
երդուեցին սուրբ աւետարանաւ խիստին, որ ամէն մէկը,
մինչև վերջի շունչը կռուել և պահպանել լոյս հաւատը,
և այսպէս մէկ միտով խրախուսուած և բոլոր յուսով առ
Աստուած ապաւինած՝ միանգամայն թափուեցին Պարսից
վերայ, կործանեցին կրակատները, փռնդեցին քրմերին,
սպանեցին ուրացողներին և նորոգեցին Եկեղեցիները. և
այսպէս քաջութեամբ զուռնդն երեք տեղ բաժանեցին և յար-
ձակուեցին աւելի յաղթանակութեամբ Պարսից վերայ. երբ
քաջութեամբ յաղթութիւնը սաստկացաւ՝ նո՛ր ի նորոյ

եռանդոտ սրտերը վառուեցան՝ չարահոգի Սարգսան Վասակ ուրացողը ցանկացաւ խախտել ուխտը և երդումը քաջ նախարարաց. ուստի Պարսից հետ միացաւ ու սկսեց վերստին քանդել եկեղեցիքը, աւերել Հայոց խեղճ աշխարհը և գերի ուղարկել նախարարաց որդիքը Յաղկերտ արքային: Եհա՛ այս սրտաճմլիկ անցքը, երբ լսեցին քաջ Վարդանի դունդը՝ փութով գնացին Սիւնեաց երկիրը քարուքանդ արեցին չարահոգի ուրացող Վասակի կալուածքը և կրակատները այրեցին և ընդդիմադարձներին բռնեցին:

Բայց անհաւատարմութիւնը ուխտեալ և երդուեալ մարդկանց՝ տեղի տուեց դեսպան ուղարկել Յաղկերտի մօտ մի պարսիկ այն պայմանաւ՝ որ եթէ աղատութեամբ թոյլ տայ մեր քրիստոնէութիւնը պաշտել՝ մենք ևս հնազանդ կլինենք նորան: Երբ լսեց թագաւորը ուրախացաւ, նենգամիտ կամքով յանձնառաւ պայմանը և հրովարտակ հանեց որ քրիստոնէութիւնը համարձակ պաշտեն: Իսկ յետոյ մեծ զօրք հաւաքեց և ուղարկեց հաղարապետ Միհրներսէհին դարձեալ անբաղդ Հայոց աշխարհը աւերելու: Գնաց Միհրներսէհը Փայտակարան, խորհեց ուրացող Վասակի հետ որ Հայոց միաբանութիւնը քանդեն. իսկ յետոյ գնաց Յաղկերտի մօտ:

Բայց, ուխտապահ Հայոց նախարարքը, շուտով մարգարէացան Յաղկերտի և Միհրներսէհի չարութիւնքը. ուստի՝ չբաժանուեցին միութիւնից. մանաւանդ երբ տեսաւ քաջ Վարդանը՝ Վասակի անթիւ չարութիւնները և զարհուրելի պատրաստութիւնները Պարսից՝ կանչեց իրան մօտ բոլոր ուխտեալներին: Հինգամանակը հաւաքուեցան Հշտիշատ քաղաքը վաթսունեվեց հազար անձնանուէր Հայք. նոցա հետ էին և Ս. Յովսէփը, Սա-

հակ եպիսկոպոսը Ռշտունեաց, Ղևոնդ Երէցը և ուրիշ շատ քահանաներ և սարկաւագներ. բոլորը հաղորդուեցան և Աւարայրի դաշտումը Պարսից դէմ Տղմուտ գետի մօտ պատրաստուեցան Վարդանանք. ուր՝ քաջ Վարդանը և սուրբ Ղևոնդ երէցը, լցուած Հաստուածային շնորհօք՝ աւելի ևս, քաջացրին սրտերը, ամրացրին բաղուկները և ՅԱՆՈՒՆ Հաստուծոյ յիշելով Հոգեգալստեան շաբաթ օրը որ էր 2-ն Յունիսի 451 թուին աներկիւղ քաջութեամբ յարձակուեցին Պարսից վերայ. որոնք քաղցր յօժարութեամբ յանձնէին առել Հոգի և Ս. եկեղեցւոյ համար մահը: Երբ պատերազմը սաստկացաւ՝ կանայք և օրիորդք, մեծ և փոքր, ժողովուրդք և հոգևորականք, աղքատք և հարուստք, պայազատք և իշխանք, խիստին ամենայն արիական քաջութեամբք՝ խաչակնքեցին երեսները, պատրաստեցին վահանները, փայլեցրին սուսերը և պատերազմը սաստկացրին ձայն, դղրդում, որոտում, ճայթմունք, և ահռելի յաղթութեամբ, երբ թշնամեաց բանակը տկարացաւ ծածուկ խորհրդակից.քն չարահոգի ուրացող Վասակի, որոնք Հայոց մէջ էին, սկսեցին շփոթել զօրաց՝ յետ փախչել, խաբել. . . . մինչև որ պատճառ եղան ամբողջ բանակի վտանգմանը: Հինտեղ երանելի քաջ Սպարապետ Վարդանը, տեսնելով այս ընդդէմ բնութեան կամաց՝ Վասակի արարքը, սկսեց ցոյց տալ զայրացած սրտով. իւր վերջին ուժը . . . բայց թշնամեաց բանակը խրախուսուելով Վասակից միանուագ վրայ վազեցին ուր ընդունելով յանկարծակի վերջին հարուածը թշնամեաց՝ վեր ընկաւ Ս. Վարդանը և մեռաւ, նահատակուեցին նորա հետ բաւականաչափ, արենարբու և քաջ նիզակակից.ք. որ բոլոր նահատակելոց թիւը եղև 1036 հոգիք: Սրբոց Վարդանանց նահատակութիւնից յետոյ՝ Պարսից սպարապետը

զրեց Յակոբեանն բոլոր այս փառեղները և քցեց ուրացող Պ. ասակի վրայ. որ թագաւորը տասմելով ուղարկեց մի Պարսիկ Մարզպան Ատրոմիզդ անունով. որը մի հնարքով նենգութեամբ բռնեց երանելի Ս. հայրերին. այնէ՝ Սուրբ Յովսէփ կաթուղիկոսին. Սահակ եպիսկոպոսին Ոշոնունեաց, Մուշէ և Ղևոնդ երէցներին, Սամուէլ, Աբրահամ և Աբրէն քահանայքը, Քաջաջ սարկաւագին և Խորէն ու Աբրահամ աշակերտացն սոցին. որոնց առաջուց բռնելէր ուրացող Պ. ասակը: Սոցա բոլորին ուղարկեց Պարսկաստան, ուր բռնեցին մահապարտաց բանդում:

Իսկ 454 թուին հրամայեց Յազկերտը. Դենշապուհին որ սպանեն նոցա. գնաց Դենշապուհ քաղաքը հանեց բանդից և տարաւ հեռու տեղ ու երանելի սուրբ հարց սպանեց, որ էր 31 Յուլիսի 454 թ. որոնք կոչուեցան Ղևոնդեանք:

Եհ՛ա մեր անցեալ գիտառատ Ս. հայրերի, չքնաղ և անձեռնուէր եղբայրների և ջնաշխարհիկ քնքոյշ քոյրերի՝ սարսափելի նեղութիւններից յետոյ, որ իւրեանց փառուած քաջութեամբը՝ հիմն են եղել մեր Հայոց Եղեռ՝ և անբիծ Արծնի, պրպտութեամբ հաստատ պահպանելու համար. ուրե՛մն, մի՛թէ ամօթ և նախատինք չէ՞ մեզ համար արդեօք, որ այդ Ս. Ղևոնդեանց և Ս. Վարդանանց ոտնելը անշրջբեղ, առանց մի ազգային հանդիսակատարութեանց թողումե՛նք. մի՞թէ, մե՛նք նոցա հարազատ որդիքը և թոռունքը չե՞նք. մի՛թէ, մեզ մէջ չկայ արդեօք նրանց արեան կաթիլներից գո՞նէ մի կաթիլ. չէ՛, չէ՛ ապիւ Հայեր! սթափուեցէ՛ք, և անշուշտ պե՛տք է սթափուինք և սովորութիւնք շինենք մեզ համար. որ այդ Ս. Վարդանանց

ոտնի օրը մեր Հայերի մէջ Եղեռին չքեղ հանդէս կատարենք. այս ոտնը՝ է Եկեղեցական և Եղեռին, որ 66 հազար անձնուրաց Հայոց զօրքերից՝ նահատակուեցին 1046 ընտրեալ Հայկազունք. ուրեմն Ս. Եկեղեցին չքեղութեամբ կատարելով այս ոտնը, մնում է և մեզ Եղեռնոցս, որ կատարենք ամենայն տարի, այնպիսի փառաւոր հասարակական և եկեղեցական հանդիսիւ՝ որպէս կատարուեն Տաճկատանի մեր Հայ եղբայրները. ուրեմն եկէ՛ք յիշատակենք և մեր ընտանեաց մէջ. թո՛ղ մեր շրջապատեալ ծաղկափթիթ զաւակաց սրտերում բևեռենք այսպիսի ազգային երևելի անցքերի յիշատակները:

4.

Տիրապետողք զանազան Տէրութեանց:

1 ԵՂԷՐՍԵՆԴՈՐ Ռ. ԻՆՐՆԵՍԿԻԼ ԱԿՍՅՍՐՐ ամենայն Ռուսաց. . . . 58 տարեկան:
2 Ընդրեայ. Վիկտորիայ Ե. Թագուհի . 55 տար:
3 Եւսարիայ. Ֆրանց—Յոսէփ Ե. Կայսր. . 45 տար:
4 Բելգիայ. Լէոպոլդ Բ. Թագաւոր . . 40 տար:
5 Բրազիլիայ. Դոն—Պեդրո Բ. Կայսր . . 51 տար:
6 Պարսից. Մակ—Մահմոն Նասրադին . .
7 Գերմանիայ. Վիլհելմ Ե. Կայսր . . . 78 տար:
8—Բաւարիայ. Լիւդվիգ Բ. Թագաւոր. . 30 տար:
9—Բադէն. Ֆրիդրիխ Ե. Դուքս. . . . 50 տար:
10—Վիրտեմբուրգ. Կարլ Ե. Թագաւոր. . 53 տար:
11—Հեսեն—Դարմշտատ. Լիւդվիգ Գ. Մեծ

Դուքս . . . . . 66 տար։
12—Մեկլենբուրգ—Սարելից. Ֆրիդրիխ—Վիլհելմ. Մեծ Դուքս. . . . . 57 տար։
13—Օլդենբուրգ. Պետրոս Ա. Մեծ Դուքս. 49 տար։
14—Սակսոնիայ. Յովհաննէս Ա. թագաւոր.. 75 տար։
15 Դանիայ. Քրիստիանոս Թ. թագաւոր. . 58 տար։
16 Եղիպտոս. Իսմայիլ-Փաշայ թագաւոր . . 60 տար։
17 Իտալիայ. Վիկտորիոն Մանուէլ Բ. թագաւոր. 55 տար։
18 Յունաստան. Գէորգ Ա. թագաւոր . . 30 տար։
19 Սիգերլանդիայ. Վիլհելմ Գ. թագաւոր. 69 տար։
20 Շուեդիայ և Նորվէրգիայ. Օսկար Բ. թագաւոր։
21 Շուեցարիայ. Շէնկ Նախագահ . . . . . .
22 Զերնոգորիայ. Նիկոլայ Կնեազ. . . . 33 տար։
23 Չինաստան. Թունդչի Կայսր . . . . 19 տար։
24 Պարսկաստան. Նասր—Էդդին Շահ. . 46 տար։
25 Պորտուգալլիայ. Լուիս Ա. թագաւոր . 37 տար։
26 Սերբիայ. Միլան Դ. Կնեազ. . . . 23 տար։
27 Սպանիայ. Ամեդէյ Ա. թագաւոր . . 31 տար։
28 Տաճկաստան. Աբդուլ—Ազիզ Սուլթանխան 46 տար։

5.

Չբաղմունքների հետևանքները Մարդոյս առողջութեան վերայ։

1. Դերձակները՝ պակասութիւն են ունենում, շարժողութիւնից, մաքուր օդից և ձգտմամբ աշխատելուց. ուստի նեղութիւն են զգում արեան պակասութիւնից, թուլութիւն մարսողականութիւնից, ստամոքսի և լեարդի տկարութիւնից և թոքային բարակացաւից։

2. Կօշիկարարները՝ մեջքները կռացրած մշտական նստածեն.—որով ճնշումն լեարդը. նեղացնումն կուրծքը այս պատճառով նրանցում երևումն կուրծքի ցաւ, և որովայնի գործարանի բարակացաւ։

3. Ոսկերչները՝ (կտաւագործքը) ենթարկվումն աչքացաւութեան, շնչառական և ստամոքսական գործարանների նեղութեանց։

4. Ներկարարները՝ հանքային ազդեցութիւնից և գործածական թոյներից՝ ենթարկվումն.—փքային ցաւերի, նեղութիւն են կրում կուրծքի գործարանից, ոսկրացաւից (խոնաւական օդացաւից) և շնչարգելութիւնից։

5. Բրուշարները՝ որոնք պարապումն սնդկի (ժիպակի) պատրաստութիւնից՝ նեղութիւն են կրում.—թքահոսութիւնից, աղամների դողալուց, մարմնի սարսափելուց կսթուածից, նուազութիւնից և այլն։ Դէ Փոփորը՝ առաջացնումէ առանձին տկարութիւն, այնէ՝ անշարժութիւն ծնօտի։ Դնոպեղը՝ (МЫШЬЯКЪ) յառաջացնումէ հետզհետէ,—թունաւորութիւն։

6. Դեղագործաց Քիմիագործ և սոցա նմանները՝ ենթարկվումն, — աչքացաւութեան, ստամոքսի տկարութեան և թունաւորութեան։

7. Գոբելը—ը Ներկները ― Օդի Քաշները՝ նեղութիւն են զգում,—Օդի ոգւոյ ցնդումից և ածխային թթուադից։

8. Հայելենները և Ջաշոպները՝ սկսեալ ալիւրի փոշուց և օդի բարեխառնութիւնից՝ տեգերվումն,— աչքացաւութեամբ, թեթև ու փքային հիւանդութեամբ։

9. Քարշները՝ փոշիներից նեղանալով՝ ենթարկվումն, աչքացաւութեան, կրծքի տկարութեան, կսթուածից,

ոսկրացաւից Լայլն։

10. Յարչաշեռները՝ (կոուր ծածկողները) նեղանուամն,—բորբոքութիւնից, քթի արիւնահոսութիւնից, խլութիւնից ու խլուացքից։

11. Խաւաները՝ ուրիշներից սակաւն զգում տկարութիւն. մանաւանդ որ նոցա արհեստը, առողջութիւն է բերում։

12. Բրոնշիները և Աղիսաեիները՝ կաւի խոնաւութիւնից՝ ենթարկվումն,—ջերմութեան, և զլխոց պտոյտի։

13. Մորնեգործները՝ միւսներից սակաւ են տկրանում ընդհանուր տկարութեանց. սակայն ենթարկուածն երկու առանձին հիւանդութեանց. այնք՝ Ա. Մասների խօլեր։ որէ արեան տարածութիւնը մասների մէջ, որ ցեռոյ փոխվելով դառնում էլեք։ Բ. Է վելք մասի ծայրի փափուկ տեղում. որ տեղից, արիւնը հիւթէ առնում կաթիլներով. որով զգալի լինում տարափելի ցաւ։

14. Խոհարարները՝ ենթարկվումն մի առանձին տկարութեան, այնք՝ որ նոցա ոտների վերա լայնանումն երակները, որով յառաջէ դալիս վելք։

15. Յոմագործները՝ ընչառութեամբ քաշելով Պղնձեղենի փոշին՝ տիրանումն,—տարափելի թոքախտութեան։

16. Տպարանի Օսուայները՝ նեղանումն, Ա. Կապարային այն տկարութեամբ որով լինում ծանրութիւն և կուռոց որովայնում։ Բ. Եւ միառանձին տեսակ ջերմական տկարութիւնից, (тифъ)։

17. Քիսոները՝ ընչառութիամբ քաշելով փայտեղենների աղոցած փոշին՝ և բաղուկների չափազանց ձգտումներից՝ բոլորովին վնասվումն,—թոքախտութիւնից և մի առանձին տեսակ ջերմական տկարութիւնից։

18 Ոչխարչները՝ նեղանումն թեթև տկարութիւններից. այնք՝ սնդկի թոյնից, կապարային որովայնական ծանրութիւնից, խոցից, ու ոսկրափտութիւնից։

19 Օրկոխոտ պտարտոպոշները՝ նեղանումն,— հեղձումից, կապարային որովայնական ծանրութիւնից և կռկռոցից, նքոցից, անդամների սարսափից, խլութիւնից՝ և թոքային տկարութիւններից։

20 Երկրագործները՝ չափազանց ենթարկվումն՝ ջերմ ախտութեանց։

6.

Ամուսնութեան ազդեցութիւնը՝ Կեանքի Երկարատևութեան վերայ։

Փարիզու Նեմարանի բժշկապետ—Ընդամ Բերթիչեանը իւր շատ տարիների խոր քննութիւնից յետոյ, Եւրոպայի բոլոր կողմերի մէջ, ցոյցէ տալիս, որ հասակների մէջ, 25 պարբէանից մինչև 30 պարին, ամեն մի 1000 մարդից մեռնումն հետևեալ կարգաւ, Պակվածներից՝—6. Ամուրիներից՝ (ազատներից)—10. Այրներից՝—22։ 30 պարբէանից մինչև 35 պարին. Պակվածներից՝—7. Ամուրիներից՝—11½. Այրներից՝—19։ 35 պարբէանից մինչև 40 պարին պակվածներից՝—7½. Ամուրիներից 13. Այրներից՝—17½։ Բայց ամուսնութիւնը մինչև 20 տարեկան հասակը, վնասներէ յառաջ բերում աղամարդի առողջութեան և կեանքի վերայ, այնպէս որ 1000 մարդից, աղամարդ—դեռահասակներից՝ մեռնումն տարուայ մէջ 50 մարդ. այն ինչ՝ սորա հակառակ նոյն հասակում մահը աղջիկների մէջ՝ երևումէ 1000 մարդից, ընդամենն

7 հոգի. ահա այսպէս զուր կորցնումենք անզգուշութեամբ տարուանը, դեռահասակ պսակուողներից 43 մարդ: Վ ասորոյ յայտնապէս տեսնումենք որ միմիայն 20 տարեկանից և բարձր տարին՝ երկարատևութիւնէ կեանքի և ընդհանուր առողջութեան. աղամարդիքը ամուսնութեան մէջ՝ կախումն ունին նորա դրութիւնից: Բայց ընդ հակառակն ոչինչ նմանութիւն բոլորովին չէ՛ երևում վերաբերեալ կանանց սեռին: Այրի կանայքը վշտութեամբ են՝ կրում իրանց մարդկանց կորուստը չթողնելով ո՛չ մի վիճակագրութեան հետքեր նրանց մահուան. և ընդհանուր կանանց մարմնոյ կազմութիւնը թոյլ յարմարութիւնէ ունենում դէպի բոլոր դրութիւնները, դէպի շուտ և ուշ ամուսնութիւնը, Այրիութիւնը և անամուսնութիւնը:

7. Մարդկանց թուերի Վերայ՝ Ծնունդը և պսակը:

Երևելի ուսումնական Բէրկո-ին հաշվումէ որ միջին թուով դուրսէ գալիս ուրիշ տէրութիւնների մէջ, 32 մարդին՝ 1 ծնունդ. իսկ Ռուսաստանումն, 20 մարդին՝ 1 ծնունդ: Եվրոպայի մէջ 124 մարդին ընկնումէ՝ 1 պսակ, բայց Ռուսաստանումն՝ 95 մարդին՝ 1 պսակ: Ուրեմն տեսնումենք որ յաջողակութեան հանգամանքները Ռուսիայի համարէ:

8. Նոտարների Վարձատրութեան Կանոնաւոր Գները:

Յորոնած.

1. Նոտարական իրաւագրերի (Акты) աւարտման համար՝

Վճարք՝ { Իրաւագրերի համար՝ ոչ բարձր 500 ռուբլի. 2ր.
Իրաւագրերի ,, 501 մինչև 1000 ռուբլի. 3ր.
Իրաւագրերի ,, 1000-ից բարձր՝ . . . . . 4ր.
վճարեն: }

բացի այս՝ պետքէ վճարել 10% այնէ՝ իւրաքանչիւր 100 ռուբլուն 10 կոպ:

2. Փոխառեալ պարտաւորութիւնների, մուրհակների, և լրացած ժամանակին՝ նրանց նոտարին ներկայացնելու (протестъ) հաստատութեան համար՝

Եթէ որ պարտաւորութիւնների կամ մուրհակների գումարը չի բարձրանում 500 ռուբլուց՝ վճարվում 50 կոպ.

Եթէ որ պարտաւորութիւնների կամ մուրհակների գումարը, բարձրանումէ 500 ռուբլուց՝ վճարվում. 1 ռուբ. բացի այս՝ պետքէ վճարել 10%-այնէ ամեն 100 ր. 10 կ.

3. Միւս պայմանագրերի հաստատութեանց համար, բացի նեղքոյ նշանակեալ 7 յօդ. Ոչ բարձր 500 ռուբլուց՝ վճարվում. 1 ր. սկսեալ. 501 մինչև 1000 ր. վճարվում 1 ր. 50 կոպ. սկսեալ. 1000 ր. բարձր 2 ր. բացի այս՝ պետքէ վճարել 10%-այնէ ամեն 100 ռուբլուն 10 կոպ.

4. Իրաւագրերի և պայմանագրերի աւարտման ու հաստատութեան համար, որոնց գները չի նշանակուած՝ վճարվում, ինչպէս իրաւագրերի և պայմանագրերի՝ 1000 ռուբլու գինը:

5. Պատճէնների ուղղութիւնը վաւերացնելու համար, առաջի թերթին վճարվումէ 25 կպ. իսկ հետևեալ ամեն մի թերթին 10 կպ. հաշուելով 25 տողը մի երես:

6. Ստորագրութիւն վաւերացնելու համար՝ վճարվում 10կ.

7. Հաստատմանթղթերի, Մինիստրական դրութիւնների. (Третейская запись) Հաշտութեան թղթերի և խնդիրների համար. վճարվում Առաջին թերթին 1ր. իսկ միւս թերթերին՝ (եթէ լինին) — 50 կոպ:

Публичная Библиотека
7/XI-1922

Ամբս հասարակ գրքերի համար, Առաջին թերթին 50 կոպ. Մի երեսին 20 կոպ:

9. Ստացարի իրաւագրական գրքի մէջ, մտցնելու համար զանազան թղթերի, վճարելու ամեն մի իրաւագրական գրքի տողին—2 կոպ:

11. Մի մարդից միւսին ծանուցումն և նորա մասին հաստատութիւն տալու համար,—50 կոպ:

12. Հակառակ կողմի ընդդիմախօսութիւնը (возраженія) հաստատութեան մէջ գրելու համար,—50 կոպ:

14. Իրաւագրերի կատարման կամ վաւերացման ժամանակի համար, տեղեկութիւն և գրաւոր հաստատութիւն տալու. — 50 կոպ:

15. Երկրորդական, և հետևեալ անգամ պատճէններ դուրս տալու համար՝ առնվում, ամեն մի տողին՝—1 կոպ:

16. Ստացարը իւր գրասենեակից դուրս, գործողութիւնը կատարելու համար՝ բացի նշանակած նախայիշեալ յօդուածների վարձն՝ ստանում, մայրաքաղաքների մէջ 3ր: Սահմանական քաղաքների մէջ 2ր., Իսկ գաւառական քաղաքների և գաւառների մէջ 1ր:

17. Քաղաքի սահմանից դուրս գնալու համար վճարվում ամեն մի մղոնին (версту) 10 կոպ., իսկ երկաթուղեայց ճանապարհներում երկրորդ կարգի գնալու դալու վճարը, և բացի այն՝ միջոցի համար պարապած գնալու դալը, մայրաքաղաքներից վճարվումն 5ր., Սահմանական քաղաքներից 3ր., ուրիշ տեղերներից 2ր., եթէ գնալու դալը 24 ժամից աւելի չէ եղել ընդ հակառակն ամեն մի,թէպէտ ուղիղ օրել չլինի՝ դարձեալ վճարվում օրվայ վարձն լիովին:

19. Ստացարը, կարող է վերոյիշեալ 16 և 17 յօդուածներում նշանակած տեղը կանչել սահանջել:

3m

5308

2013

<< Ազգային գրադարան